


Նրա, Նրանք



891.71

Վ-40

Մ Ի Ք Ա Յ Ե Լ - Պ Ա Պ Ի

Հ Ե Ռ Ի Մ Ի Ս Ա Ն Ի Ն Կ Ո Վ Կ Ա Ս

1943

891.71

4-40

47

30 MAY 2011

ՎԵՐԱ ՎԵՆՄԱՆ

Մ Ի Ք Ա Յ Ե Լ - Պ Ա Պ Ի

(ՈՒՐՎԱԳԾԵՐ)

Թարգմ. Վ. ԱՎԱԳՅԱՆԻ

2689
1006
28302



ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

1933

Այս գրույկը հարվածային կարգով
գրված յեմ բաց և բողնված խորհր-
դային գրողների Միության Հյուսիս-
սային Կովկասի կազմկոմիտեյի յեմ
«Հյուսիսային Կովկաս» հրատարակ-
չության բրիգադի անդամի կողմից՝
«ՀԻՆ ԿՈՒՏՆՏԵՍՍՈՅԻՆ ԳՎԱՐԳԻՍՅԻ»
ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀԱՎԱՔԻ ԱՌԹԻՎ

1.

Պարնան պարզ որերին, ծերունիները հավաքվում
եյին Համբարձում պապի — գյուղի ավագի տան դրսի
սանդուղքի վրա: Տափաստանում ձյունը դեռ պառ-
կած եր կեղտոտ բամբակի կույտերով, սանդուղքի
ճեղքերից դեռ դուրս չեյին յեկել ուրախ, կարմիր
բզեզները, բայց յերկինքը հրճվող, կապույտ գմբեթով
իշխում եր տափաստանի վրա և արևը թեթև կեր-
պով տաքացնում եր ծերունիների վոսկորները...

— Նայիր, Միքայել պապի, պառավդ յեկեղեցի յե
գնում:

Պառավ թովալ մեծան (տատի) գավազանի վրա
կաթնած դանդաղորեն բարձրանում և սարը: Նրա
ցավոտ վոսները լպրծուն ցեխում դես ու դեն եյին
սայթաքում, նա ախ և քաշում և վախից ծածկում և
դուրս թռած աչքերը, — նա ինչպես կարող և չգնար:
Չե վոր յեկեղեցում կլինեն Պերսապե մեծան և Վար-
դուշ մեծան — Սուլթան Սալա գյուղի բոլոր հարգելի
պառավները: Նրանք այնքան ել չպիտի լսեն, թե ինչ
կերգի այնտեղ տերտերը, նրանք այդ բանը հաճախ
են լսել և նրանց համար արդեն հետաքրքիր չե, —
նրանք յեկեղեցում խմբերով կկանգնեն և կամացուկ
կխոսեն իրենց գործերի մասին, թե ինչպես են մեծանում
թոռները, ինչ լավ փեսացու յե բջիջի նոր քարտու-

դարը և ինչ ասաց Ասատուր պապիի վորդին՝ Լուկաշը, յերբ իմացավ, վոր իր կինը անամոթաբար դավաճանում է իրենս...

Իհարկէ, սրանց մասին տանն ել կարելի չէ խոսել, սակայն այն ժամանակ ել ինչի՞ համար է յեկեղեցին: Յեվ յեթէ պառավները դադարեն յեկեղեցի գնալուց, ապա ինչ պիտի ուտի պատվարժան տերտերը:

Յեվ թոփալ մեծան զառանցում է, ախ քաշելով և կոթնելով գավազանի վրա:

— Վնչ, դու ինձ ասս, Համբարձում. եղ ինչպես յեկեղեցում կանգնելու համար նա վոտք ունի, իսկ տանն աշխատելու համար վոտք չունի: Ասս, ասա խնդրում եմ:

Միքայել պապին ասում է այդ առանց չարամտության: Վերջի վերջո, պառավն ուզածին չափ թող տնքա, յեթէ դա նրան բավականություն է պատճառում: Ինքը կարող է դեռ աշխատել, կարող է կերակրել իր կնոջը: Այժմ նրա կինը հաշմանդամ է, իսկ մի ժամանակ ջահել, ուրախ, բարի յեր, սիրում եր իր Միքայելին և յեռանդուն աշխատում եր, հավատացած լինելով, վոր նրանք յերկուսով կարողանում են ազատվել չքավորությունից:

— Միայն ափսոս է Նուրբիկան: Չահել աղջիկ է: Յերեկն աշխատում է, գիշերն աշխատում...

— Բրիգադիր Մովսեսովը գովեց Նուրբիկային, — ասում է Կարապետ Պոպովը:

Նա այդ ասում է յուրաքանչյուր կիրակի՝ բայց ամեն անգամ բոլորը՝ իբրև պատասխան, խոնարհում են գլուխները, վորպես թէ կարևոր նորություն են լսում: Յեվ ամեն անգամ Միքայել պապիի դեմքն իր բոլոր կնճիռներով միասին փայլում և ժպտում է. Նուրբիկան — իր սիրելի աղջիկն է, իր պարծանքն է և ուրախությունը:

Իսկ Նուրբիկայի մասին յեղած խոսակցությունն ուրիշ խոսակցության է փոխվում:

— Յերբ բոլորը Նուրբիկայի նման աշխատեն, — ասում է Միքայել պապին, մենք մի աշխորին 1200 գրամ չենք ստանա, ինչպես անցյալ տարի: Այն ժամանակ մենք ավելի կստանանք:

— Միքայել պապի, սիրելիս, — նկատում է Համբարձումը, — աշխարհումս միշտ ել չաշխատողները շատ են յեղել, քան աշխատողները:

— Ճիշտ չէ, — պատասխանում է Միքայել պապին:

Յեվ դառնալով բարեկամին, նա կանչում է ցածր, բարակ և թույլ ձայնով:

— Չե... Իու մենատնտես եյիր — աշխատում եյիր: Ուժ ունեյիր, հա: Իսկ կոլանտեսության մեջ ծերոնի դարձար: Ուժ չունես: Իսկ յես կաշխատեմ, այո: Քանի դեռ ձեռքեր ունեմ, քանի դեռ գլուխ ունեմ, կաշխատեմ, այո: Կուլակն ասում է — կոլանտեսության մեջ չպետք է աշխատել և դու չես աշխատում, Համբարձում բիճա:

Յեվ այստեղ, սանդուխքի վրա այնպիսի մի աղմուկ է բարձրանում, վոր տանիքի վրա թառած սպիտակավիզ աղավինները վախից, ցած ամուկով, թրուչում են մարագի յեակը: Ծերունիները կանչում են բոլորը միասին: Վոմանք Համբարձումին են պաշտպանում, վոմանք ել Միքայելին: Միքայելն ասում է.

— Իու տեսնում ես, վոր մի ուրիշ մարդ վատ է աշխատում, այնպես չէ: Ինչո՞ւ չես ասում նրան: Կարող է պատահել, վոր նա ուզում է լավ աշխատել, բայց բան դուրս չի գալիս: Կարող է պատահել, վոր նա դեռ ջահել է և չի իմանում: Սովորեցրու նրան, դու կարող ես սովորեցնել, այնպես չէ: Իու քո ամբողջ կյանքումդ հող ես վարել և գիտես, վոր նոսր

վարելը վատ է: Իսկ նա նուր է վարում — չի իմանում:
Մտածեցիր և ասա. յերիտասարդ, դու լավ չես վարում...

— Իսկ նա քեզ կասի... վատ խոսքեր կասի:

— Այն ժամանակ Մովսեսովի մոտ գնա: Մովսե-
սովը — «250»-ական է, նա նրան չի վունդի:

— Հա, հա, Միքայելը բարկացավ...

— Վնչ, դու նայիր, Համբարձում բիձա, շուտով
ձյուն կգա, իսկ նրանք չեն ցանում: Ինչո՞ւ չեն ցանում:

— Նրանք ասում են՝ թող չորանա, գյուղատն-
տեսը հրամայեց, վորպեսզի նախ չորանա:

— Գյուղատնտես, տխուր ձայնով ասում է Մի-
քայել պապին, վոտքի կանգնելով. — գյուղատնտեսը
ջահել է: Նա ծերունիների վրա նայում է, քիթն է
ծռմուռում: Նա մեր տափաստանին ծանոթ չէ: Իսկ
մենք փորձառություն ունենք: Ի՞նչ փորձառություն
ուներս, Համբարձում բիձա:

Ծերունիներն ուրախ ծիծաղում են և մեկը մյուսի
ծնկան են խփում: Հա, հա, դու փորձառություն ուներս,
Համբարձում: Հանաքչի Միքայել: Համբարձումը վաթ-
սուն տարի այս տափաստանը վարել է: Ո՞վ գիտե,
մի գուցե նա փորձառություն չունի: Միքայել պա-
պին ել է ծիծաղում, նա չափազանց գոհ է իր կա-
տակից: Յե՛վ կապույտ, պայծառ յերկնակամարը դու-
րեկան տաքություն է սփռում ծերունիների կու-
ցած մեջքերի վրա...

2.

Վաթսուն յերկու տարի — դա շատ է:

Վաթսուն յերկու տարվա մեջ աչքերը թուլանում
և ատամները ներկվում են, ինչպես չորացած պա-
տաթի հատիկները: Իսկ ականջներն արդեն այնքան

եկ սուր լսողություն չեն ունենում և դեմքը ժամա-
նակի գութանով է հերկվում... Սակայն դա մի՞թե
այնքան կարևոր է, Միքայել պապի:

Մի՞թե յերիտասարդությունը միայն նրանումն է
կայանում, վորպեսզի բարձր ձայնով յերգել և շուրջը
գեղեցիկ պարողուհի տեսնելով, նրա հետևից վազել
և ղուռնայի զիլ աղաղակների տակ պարել:

Վնչ, սատանան տանի:

Չեղբերում ուժ ունես, ուզում ես ապրել և աշ-
խատել, ուզում ես շուտ հասնել այն կյանքին, վորը
ցույց տվեց բոլոր կոլտնտեսականներին աշխարհիս
ամենամեծ և ամենախմաստուն մարդը՝ մեծ ընկեր
Ստալինը: Ուզում ես խորանալ և թափանցել ամեն
ինչում, — և արևոտ տափաստանում այրված աչքերը
դիտում, դնում են ամեն ինչ և դաշտային քամի-
ներից թուլացած ականջներն ամեն ինչ լսում են:

Սակայն ծերունիներն այնքան ել շատ հարգանք
չեն վայելում «Սոցիալիզմի բոց» կոլտնտեսության
մեջ: Յերիտասարդությունը նրանց վրա նայում է
վորպես տարրինակ, պարզամիտ մարդկանց վրա, վո-
րոնք միայն հայհոյել գիտեն:

— Ի՞նչ անվար տեղեր ես թողել — ասում է Միքա-
յել պապին յերիտասարդ տրակտորիստին:

Տրակտորիստը կաշե կուրտկան ուսերից ցած է
իջեցնում և Միքայել պապի վրա նայում է իր
ինքնավստահ յերիտասարդության բարձրությունից:

— Իսկ դու ի՞նչ է, բրիգադի՞ր ես — հարցնում է
նա: — Կամ ո՞վ գիտե, մի գուցե քեզ կոլտնտեսու-
թյան նախագահ են դարձրել, Միքայել պապի: Ինչո՞ւ
յես քեզ հաշիվ պիտք է տամ:

— Ի՞նչ չես հասկանում, Միքայել պապի, — ասում
է նրա ընկերը: — Մենք տեմպեր և պլաններ ունենք:

Պլանը կատարելու, ամբողջ դաշտը վարելու համար մեծ տեմպեր են պետք: Չի կարելի ամեն մի չվարած տեղին հետևել: Բրիգադիրն շտապեցնելով ասում է պետք է արագ վարել:

— Պետք է արագ և լավ, — բարկացած ասում է Միքայել պապին: Բայց յերխտանսարգները չեն լսում ծերունուն, վոր նույնիսկ չի հասկանում «տեմպ» խոսքը:

Յեվ ահա մի անգամ, պարզ և արևոտ օր, Սուլթան-Սալան է գալիս զինվորական հագուստով մի շեկ մարդ, նրա հետ նաև մի ուրիշ սևամազ և ամրակազմ մարդ: Նրանք հավաքում են կոլտնտեսականներին, բարևում և ծանոթանում են բոլորի հետ: Շեկ մարդը խոսում է ուսերեն, իսկ սեր՝ հայերեն: Նրանք թեև բարձր չեն խոսում, բայց նրանց լսում են բոլորը: Թե տաքարյուն արակտորիստն է լսում, թե Միքայել պապին, ափը դնելով կնձռոտած ախանջին... Նրանք քիչ են խոսում, բայց նրանց գնալուց հետո յուրաքանչյուրը հասկանում է, թե ով է ինքը և ինչ պետք է անի, ով է նրա ընկերը, և ով է նրա թշնամին... Միքայել պապին ժողովից գնում է գլուխը բարձր պահած, նա այժմվանից ազրոխորհրդի անգամ է, նրա հետ ազրոխորհրդի անգամ են նաև չորս ծերունիներ: Նրանք ցուցմունքներ պիտի տան, թե ինչպես պետք է աշխատել, և կոլտնտեսությունը պետք է լսի նրանց:

— Այո, պետք է լսի: Այսպես ասացին քաղբածնի պետը և նրա ոգնականը:

Գարունն իր թևերը փռեց դաշտերի վրա. որեցոր ավելի յեր զգացվում նրա տաք չունչը: Ազրոխորհրդում Միքայել պապին, թափահարելով ձեռքերը, պայքարում է գերավաղ ցանքսի համար:

— Անցյալ տարի ուշ ցանեցինք — ի՞նչ յեղավ: Վաս յեղավ: Չյան մեջ եյինք ցանում — շատ հացահատիկ եյինք հավաքում: Առանց ձյան՝ քիչ եյինք հավաքում: Յերբ յես իմ գլխի տերն եյի, միշտ ձյան մեջ եյի ցանում և առատ բերք եր լինում: Չպետք է սպասել, մինչև վոր հողը չորանա. դա հիմարություն է:

Միքայել պապին ել դուրս յեկավ դաշտը, յերբ կոլտնտեսությունը ձեռնարկեց գերավաղ ցանքսին: Նա ցանում եր ձեռքով և ուրիշներին ստիպում եր ձեռքով ցանել: Դա շատ վաղ գարնանն եր, իսկ այժմ աշուն է, արտերը քաղված են, վերջին դեղերն են կալսվում և «Սոցիալիզմի բոց» կոլտնտեսությունը հանրագումարի յե յենթարկում իր աշխատանքները: Այն հողամասերը, վորոնց վրա գերավաղ ցանքս եր կատարված, մի հեկտարից ավին մոտավորապես մինչև 75 փութ մաքուր հացահատիկ, իսկ ուշ ցանված հողամասերը տեղ-տեղ նույնիսկ 30 փութ ել չկարողացան տալ...

Աշուն է: Կալսվում են վերջին դեղերը, գեղին դգումները հասունանում են տանիքների վրա, դաշտերը շեկ և փշոտ են դարձել: Հացահանձնումն ավարտված է, կոլտնտեսային շտեմարաններում լցվում է պինդ և լեցուն հացահատիկ — սերմացվի ֆոնդ, վորպիսին հաջորդ տարվա բերքի գրավականն է հանդիսանում: Հարվածայինների տներում սպիտակ ալյուրից յեփում են ափսեյի մեծություն բլիթներ, վորոնք ահագին քանակությամբ թափվում են սեղանի վրա և մարդիկ ուրախանալով ասում են.

— Անցյալ տարի մի աշխուրին վաստակեցինք ընդամենը 1200 գրամ, իսկ այժմ մայն մթերային կանխավճարը 2 կիլոգրամ է մի աշխուրի համար և մենք այժմ արդեն չգետենք, թե ինչ անենք ալյուրի

հետ Մենք պատրաստում ենք զանազան խմորեղեններ, հաց ենք թխում, բլիթներ ենք յեփում:

Այժմ բոլորը գիտեն, թե ինչի համար եյին ցանում ցելսում, ինչի համար եյին քաղհանում բոլոր արտերը, ինչի համար եյին դողում յուրաքանչյուր հատիկի համար, կոփում ծուլերի դեմ և գողերից պահպանում բերքը, վորպեսզի ունեվոր դառնային կոլտնտեսականները — ահա թե ինչի համար:

3.

Պահապանը գողին ներկայացրեց բլիթին: Գողը կտրում էր յեգիպտացորենի հասկերը, շատ կտորեց, ուզում էր փախչել — չհաջողվեց: Կարճ և հաստ յեգիպտացորենի հասկերը կանոնավոր դարսված եյին բլիթի քարտուղարի սեղանի վրա: Քարտուղարը հաշվով ընդունեց հասկերը և դեմքը կնճռոտած՝ արձանագրություն կազմեց: Դեռ գողերը գողանում են յեգիպտացորենի և կորեկի հասկերը, դեռ պատին կախված է սև տախտակը — ծուլերի ամոթալի ցուցակը:

— Ծուլի և գողի ճանապարհը մեկ է, — ասում է Միքայել պապին: Զի աշխատել — ուզում է ձրի ստել, գնում է գողանալու...

Սև տախտակի վրա Թոփայանների ազգանունը հաճախ է կրկնված: Թոփայան Ասվատուր, Թոփայան Վարդուշ...

— Մրանք ձեր ազգականները չե՞ն, Միքայել Պողոսովիչ:

Միքայել պապին ծիծաղում և գլուխը թափ է տալիս —

— Վե՛չ: Ինչո՞ւ: Սուլթան-Սալայում Թոփայաններ շատ կան: Մրանք բոլորովին ուրիշ Թոփայան-

ներ են: Իմ ընտանիքում կա յերկու աշխատող — յես և Նուրբիկան, աղջիկա Յես ունեմ 150 աշխոր, Նուրբիկան — 130: Նուրբիկան գիշերվա հերթին է աշխատում, լավ է աշխատում, հարվածայինների կախսալից է ուտում: Նա 17 տարեկան է: Իսկ պառավը հաշմանդամ է, չի կարող աշխատել: Նա կաղ է: Ծիշո է անվանվում — Թոփայան:

Այո, Միքայել Պողոսովիչի անունը վոչ մի հանցանքով չի արատավորված: Նա միշտ առաջավոր է յեղել, և վաթսուն յերկու տարիները չեն խանգարում նրան:

Ապրում է 62 տարի — բայց 50 տարվա գյուղատնտեսական ստաժ ունի:

Նա ընտանիքում ավագ վորդին էր: Ծնողները ծայրահեղ չքավոր եյին: Միքայելի բոլոր չորս յեղբայրները մանկությունից ապրում եյին կուլակների մոտ վորպես բատրակներ: Ինքը՝ Միքայելն էլ մի տարի ապրել է ուրիշի տանը, հող է մշակել տիրոջ հետ և տանտիրուհուն ոգնել է Ռոստովի շուկան բերելու պանիր, կաթ, յուղ, հավ: Այսպես ապրեց նա մի տարի, սնվելով յեփած դրումով և չոր պանրի կեղեվով, ապա հայրը նրան տուն վերցրեց. ծերացել էր, չէր կարելի առանց ոգնականի: Այնուհետև Միքայելն ամուսնացավ, բաժանվեց և շարունակեց աշխատել սեփական տնտեսության մեջ: Կիսն էլ աշխատում էր նրա հետ, և նրանք իրենց ամբողջ կյանքում աշխատել են — միշտ իրենք են աշխատել, առանց բատրակներ վարձելու:

Մրանք աշխատում և յերգում եյին, հավատացած լինելով, թե կարճ ժամանակից հետո, մի քիչ էլ համբերելով, նրանք ամբապես վտաքի կկանգնեն և կունենան մի տնտեսություն, վորն ուրիշներից վատ չի

լինի: Նրանք պահպանում էին յուրաքանչյուր հասկ, յուրաքանչյուր ճուտ և յուրաքանչյուր կոպեկ... Սակայն անցան տարիներ, սպիտակեցին նրանց մազերը, և Միքայել պապին այլևս հավես չունեի յերգելու աշխատանքի ժամանակ: Լռեց նաև նրա կինը, վորովհետև ինչքան էլ վոր շարչարվեին — միևնույն է, վոչինչ դուրս չի գալիս...

— Ինչ լավ կլինեի, կնիկ, յեթե դու գոնե մի վորդի ծնեիր, — կշտամբելով ասում էր կնոջը Միքայել պապին. — նայիր, ուրիշները մոտ ոգնականներ են մեծանում, իսկ մեզ մոտ — միայն հարսնացուներ: Մեծանում, տնից հեռանում և դեռ ոճիտ էլ են ուզում...

Նրանք չորս աղջիկ ունեցին: Նրանց սգնությամբ Միքայել պապին մշակում էր 7 դեսյատին հող ներանք ունեցին մի ձի և մի գութան, վորոնք նրանց ամբողջ հարստությունն էին կազմում: Աղջիկները, մանկությունից վարժված լինելով, աշխատում էին առանց ծուլանալու, սակայն յերբ նրանց ժամանակը հասավ, նրանք մարդու գնացին և դրա դեմ վոչինչ չես կարող անել:

— Ինչ ես կարծում, կնիկ, մենք ինչ պիտի անենք — հարցրեց Միքայել պապին, ճանապարհի գրցելով ամսից իր յերրորդ աղջկան: — Քո վոտքերը հիվանդ են, իսկ Նուրբիկան ընդամենը 14 տարեկան է և նա սովորում է:

— Նուրբիկային դպրոցից պետք է հանել, — ասաց պառավը:

— Չե, կնիկ: Նուրբիկան թող սովորի թող նա կուսազրագես չմնա, ինչպես յես և դու, պառավ հիմարներս...

— Յերևի դու հարստացել ես. Միքայել: Մի գուցե դու աշխատող ես ուզում վարձել:

— Չե կնիկ, բայց և այնպես դու ես ասա, ինչ պիտի անենք մենք: Գիտես ինչ: Յես կդնամ խորհուրդ: Յեթե խորհուրդ ե, ապա պետք է խորհուրդ տա, այնպես չե:

Յեվ խորհրդում կոմունիստները Միքայել պապին ցույց տվին յելքը: Նրանք հայտնեցին, վոր Սուլթան Սալայում շուտով լինելու յե հողի մշակման միություն: Միքայել պապին ուրախ տուն վերադարձավ և ամբողջ յերեկոն յերգեց, ինչպես յերիտասարդ յեղած ժամանակ:

Դա 1930 թվականն էր: Իսկ 1931 թվին հողամրշակման միություն չստեղծվեց, այլ կազմակերպվեց կոլտնտեսություն, վորտեղ կա յերեք բրիգադ, և առաջին բրիգադում — «250» ականից — Մովսեսովի բրիգադում հարվածայինների թվին են պատկանում Միքայել պապին և անչափահաս, հաճած հասկի նման ամբակազմ Նուրբիկա Միքայելովան:

Քաղբաժինը հաճախ է գալիս բրիգադ: Մի անգամ յեկավ և ասաց.

— Տեսնում եք, Միքայել պապի: Դուք այժմ հասարակ Միքայել պապի չեք, այլ վորակի տեսուչ: Կապիր այս ժապավենը թևիդ, Միքայել պապի, և այս նշանը խփիր կրծքիդ: Դու հիմա պիտի հսկես, վոր մարդիկ լավ աշխատեն, և նրանք պարտավոր են քեզ լսելու: Վորովհետև քաղբաժինը լիովին վստահանում է քեզ և խնդրում է քեզանից լավ նայել...:

Քաղբաժինը շատ բան ասաց, բայց Միքայել պապին միայն սա հիշեց: Նրա աչքերի շուրջը կուտակված կնճիռներն արևի լուսավոր շոգերի պես հարվեցին, անհետացան: Նա նշանը փակցրեց կրծքին, իսկ ժապավենը մի ուրիշը կապեց թևին, վորովհետև նրա ձեռները դողում էին:

Միթե ամեն ինչ կարող ես հիշել, ամեն ոք, ամեն գիշեր...

Գիշեր ու ցորեկ, վորակի տեսուչ Միքայել Պողոսովիչ Թոփալյանը դաշտումն է:

— Վարում են — յես հսկում եմ: Յանում են — յես հսկում եմ: Միշտ ֆորձոնի, գուլթանի մոտ եմ կանգնում: Ամեն ինչ նայում եմ: Մենք մեր դաշտերը մաքուր հավաքեցինք, լավ ենք աշխատում: Մինչև հոկտեմբերի 15-ը, վորակի տեսուչների հավաքը, մենք բոլոր աշխատանքները պետք է վերջացնենք — թե կալսելը, թե վարելը և թե ցանելը: Հավաքին ռապորտ պիտի տանք, վոր մեզ մոտ բոլոր աշխատանքներն ավարտված են: Տեմպ և վորակ կա:

— Յերիտասարդները վարում են, յես նրանց ասում եմ. «Վարեք, ինչպես պետքն է»: Հենց վոր մի ակոս վարեցին, յես իսկույն ընդունում եմ: Ամբողջ ակոսի միջով նայելով անցնում եմ. չե՞ վոր քաղբաժինն ինձ վստահացել է, յես պատասխանատու յեմ քաղբաժնի առաջ: Վոչ միայն մեր բրիգադում, այլ բոլոր բրիգադներումն եմ ստուգում:

— Յերրորդ բրիգադում, Բենիամին Նողայանը ինձանից վիրավորվեց: Նա 6 հեկտար հերկել է, իսկ յես բոլոր վեց հեկտարի համար էլ արձանազրություն կազմեցի, վոր վատ է: Այսպիսի վարից, ասում եմ, բերք չի լինի: Նա սկսեց կովել ինձ հետ, իսկ յես նրան բոլորի ներկայությամբ խայտառակեցի և ստիպեցի կրկին անգամ վարել նրա հաշվին: Տրակտորային բրիգադում, բրիգադիր Սաչիկյանի մոտ, նույնպես գտա 5 հեկտար նոսր վար — հրամայեցի նորից վարել:

— Շատերը դեռ վատ են աշխատում, ուզում են աշխատանքը շուտ վերջացնել, գլխներից ռադ անել, վորպիսով աշխուրդը շատ դրվեն, իսկ թե աշխատանքը լավ է թե վատ, դա նրանց համար դադարկ բան է: Մի անգամ յեկա ցանքսը դիտելու, նայեցի թե ինչ սերմացու յե ցանվում — ինձ դուր չեկավ: Ասում եմ՝ «Այս սերմերը տրիերից չեն անցկացվել»: Իսկ նրանք ասում են. «Մենք քամհարով ենք մաքրել, դա միևնույն բանն է»: — «Վոչ ասում եմ, դա միևնույն բանը չէ, սա աղբ է, այլ վոչ թե սերմացու — և բարի յեղեք մաքրել տրիերով»:




Միքայել պապիմ ստուգում է ցանողների աշխատանքը

— Մաքրեցին:

— Մաքրեցին: Չե՞ վոր ինձ քաղբաժինն է հանձնարարել նայելու: Իմ կողմն են նաև բրիգադիրը և հարվածայինները, Յերկրորդ բրիգադում հարզի մեջ շատ

հատիկ կար: Յես հրամայեցի ուրիշ մաղ գնել և այդպիսով գործը հաջող գնաց: Ստիպեցի նաև երեսը: 20 պարկ հատիկ ազատեցինք, վորն անում է 70 փուլ:

— Հրամայեցի յերրորդ անգամ փոցխել: Յերկու անգամ փոցխել են արտը: Յես յեկա և տեսնում եմ, վոր հասկերը վոտքի տակ կոխկուտվում են: Փոցխեցին յերրորդ անգամ և վեց հեկտարից հավաքեցին քսան չորս փուլ: — Գնում, տեսնում եմ, վոր շաքարացանի վրա միայն քշողն է աշխատում, իսկ ցանողը չկա: — Ո՛ւր է ցանողը: Քշողն աչքերով նշան է անում. — Չգիտեմ — ասում է: Յես գնացի փնտռելու: Տեսնում եմ, վոր Ծերուն Կորմիզոտյանը, Սաղաթեյ Պապովը և Տարասյան Հարությունը միասին նստած



Միքայել պապիի դարսած դեզը

ողի յեն կոնծում: Յես նրանց տեղն ու տեղը խայտառակեցի, իսկ հետո արձանագրություն կազմեցի: Նրանց յուրաքանչյուրին տուգանեցին 10 աշխորով: Իսկ Ծերունին հանեցին աշխատանքից, վորովհետև նա անպետք մարդ էր և փչացնում էր մյուսներին

— Դիզողների մեջն էլ հանցավորներ կային: Խըմում էին և աշխատանքի չէին գալիս: Նրանց նյութապես տուգանեցին:

Սակայն Միքայել պապին վոչ միայն ուրիշներին է հսկում, այլ նաև ինքն է անձամբ աշխատում: Զուր չէ, վոր նա 150 աշխոր և հարվածայնի տոմս ունի: Զուր չէ, վոր նրա դարսած դեզերը նկարված են և նկարը տպված է թերթում: Բաղբաժնի տեղակալ ընկ. Յեղիազարյանն ասում է.

— Ռայոնում նրանից լավ դարսող չկա:

— Ինչու՞ն է գաղտնիքը, Միքայել Պողոսովիչ:

Միքայել պապին ծիծաղում է:

— Գաղտնիք չկա: Գրիր, աղջիկս: Թող բոլորն ել իմանան: Յես խուրճերը ձեռքով դարսում եմ և վոտքերով լավ հուպ եմ տալիս. ավելի լավ կլինի: Խուրճերը իրար մոտ եմ դարսում: Իսկ վերևի մասը վերմակի պես հարդի թանձր շերտով ծածկում եմ: Անձրև վոր գա, չի թրջի: Իսկ յեթե թույլ դարսեմ, անձրևն ամբողջ դեզը վերից վար թրջում է:

— Ինձ առաջ ել բրիգադիբը միշտ դիզել էր տալիս: Իսկ այս անգամ յես և Կարապետ Պոպովը մըրցում եյինք իրար հետ: Մենք իրար կողքին եյինք աշխատում. նա ասում է.

— Արի գրագ գանք, թե վորին ավելի լավ կլինի:

Նա ծեր է, յես ել եմ ծեր: Նա յեւ է լավ դարսում, յես ել եմ լավ դարսում: Բայց իմս ավելի լավ համարեցին: Ինչո՞ւ: Նա կլոր դեզ էր դարսում, իսկ յես անկյունավոր: Անկյունավորն ավելի լավ է համարվում, նա յերբեք չի թրջվի: Տեսրան, Կարապետ բիճա, յես քեզ հաղթեցի:

Ծերունիներն իրար բռնում են և ծիծաղում: Ակնոցները ճակատին բարձրացնելով, պապիրոս փաթաթելով, Կարապետ բիճան ասում է. — Տեսնում ես, Միքայել պապի, յես ծեր եմ, իսկ դու իմ ծերության հասակիս սովորեցրի՞ր անկյունավոր դեզեր դարսել:



Յերեկոյան բրիգադում քեֆ են անում, ամբողջ դաշտում լավում ե զուռնայի և նաղարայի ձայնը: Աղջիկներն ուրախ-ուրախ քրքշում են:

— Իսկ զուք ուր եք գնում, Միքայել պապի:

— Յերրորդ բրիգադ, աղջիկս: Յերեք որ այնտեղ չեմ յեղել, պետք ե նայել...

— Դուք չեք հոգնել, Միքայել պապի: Ձեր տարիքին հանգստանալ ե պետք:

— Աղջիկս, յես կհանգստանամ այն ժամանակ, յերբ կոլտնտեսականն ունեվոր կդառնա, յերբ կոլտնտեսութուն բոլորովին բոլշևիկյան կլինի, ինչպես ասել ե մեծ ընկեր Ստալինը: Բանի դեռ սաղ եմ, ամեն ինչ պետք ե ստուգեմ, նայեմ դաշտում: Պիտի ստիպեմ նրանց լավ աշխատել: Առաջ վատ ելինք ապրում, իսկ հիմա լավ պիտի ապրենք: Յես և Նուրբիկան արդեն 175 փութ աշխատել ենք, աղջիկս: Յերբեք այդքան չի յեղել: Մեզ համար կթողնեմ 70 փութ, իսկ մնացածով կգնենք հագուստ, կոշիկ, ինձ համար պենջակ, աղջկաս համար տուֆլի, վերարկու, մահճակալ: Կգնեմ ածուխ — տունը տաք կլինի: Նուրբիկային գրքեր կգնեմ — նա սիրում ե կարդալ, ունևոր կդառնանք: Իե, մնաս բարև, աղջիկս:

Նա գնում ե, իսկ տափաստանի խավարը հետգհետե ծածկում ե նրան:

* * *

Միքայել Պողոսովիչ Թովալյանը — հին կոլտնտեսային գվարդիայի յերկրային հավաքի պատգամավոր ե: Մյասնիկյան ՄՏ կայանի կոլտնտեսությունները

չորս լավագույն վորակի տեսուչներ և ուղարկում հավաքի և, իհարկե, նրանց մեջ ամենալավը նա՝ Միքայել պապին ե — տեսուչ, հարվածային, ռայոնի ամենաառաջին զիգոդ, կոլտնտեսային աշխատանքների բարձր վորակի, բոլշևիկյան կոլտնտեսության համար, ունեվոր կյանքի համար, իսկական մախտընչողը:

«Աոց-Բոց» կոլտնտեսություն
Սուլթան Սալա,
Մյասնիկյանի ՄՏԿ:





3 5 0 6

X

Ответственный редактор Г. А. Потенц
Технический редактор О. Тер-Давыдов
Сдано в набор 23/X 1933 г.
Подписано в печать 28/X 1933 г.
Статформат Б6—125х176,
Уполкрайлит Б—534, Заказ № 5278
Об'ем $\frac{5}{8}$ печ. лист. Тираж 1500
Тип. им. "Стачки 1902 г.," СККПО
Г. Ростов н-Дону

«Ազգային գրադարան»



NL0390673

13.715

Գինը 20 ԿՈՊ.
Цена 20 коп.

39958



На армянском языке

Вера Вельтман
МИКАЭЛ - БАБИ

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԳՈՒԶԵՍ

ՌՈՍՏՈՎ-ԳՆԱ ՍՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. № 58
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)